ՓԱՍՏԱԲԱՆԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԸ ՀԱՄԱԼՐՎԵՑ ՆՈՐ ԱՆԴԱՄՆԵՐՈՎ

25.06.2022 14:50

Այսօր տեղի ունեցավ ՀՀ փաստաբանական դպրոցի 71 շրջանավարտի փաստաբանի գործունեության արտոնագրերի հանձնման հանդիսավոր արարողությունը:

Միջոցառումը սկսվեց Հայաստանի Հանրապետության օրհներգի ներքո:

Բացման խոսքով հանդես եկավ և ներկաներին ողջունեց ՀՀ փաստաբանների պալատի նախագահ Սիմոն Բաբայանը:

Դիմելով հավակնորդներին՝ Փաստաբանների պալատի նախագահը նշեց, որ Փաստաբանական դպրոցն ավարտելը հեշտ գործընթաց չէ, և փաստաբանության ոլորտում առաջին բարդ խնդիրը նրանց համար արդեն հաղթահարված է:

Սիմոն Բաբայանը փաստաբանական համայնքի նոր անդամներին մաղթեց բեղմնավոր և հաջողակ գործունեություն, ընդգծելով, որ իրենց գերնպատակը պետք է լինի Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ երաշխավորված մարդու իրավունքների ու օրինական շահերի պաշտպանությունը, գերխնդիրը՝ մարդասիրության, բարոյականության, անկախության և անկաշառության սկզբունքներով առաջնորդվելը:

Ելույթի ավարտին Փաստաբանների պալատի նախագահը շնորհակալություն հայտնեց Փաստաբանական դպրոցի տնօրենությանը և աշխատակազմին, Փաստաբանական դպրոցի խորհրդի անդամներին, Փաստաբանների պալատի աշխատակազմին, որոնց ջանքերով կազմակարպվել և անց են կացվել ուսումնառությունը և որակավորման քննությունները:

Հավակնորդներին շնորհավորեց նաև Փաստաբանական դպրոցի տնօրեն Արա Ջոհրաբյանը:

Իր ելույթում Արա Ջոհրաբյանը կարևորեց այն հանգամանքը, որ արտոնագրի հավակնորդներից յուրաքանչյուրն իր ուժերով է ընդունվել, սովորել Փաստաբանական դպրոցում և ստացել որակավորման վկայական, ինչը կարևոր է հետագա գործունեության ընթացքում կոռուպցիոն ռիսկերը բացառելու հարցում: Փաստաբանական դպրոցի տնօրերնը բարի երթ մաղթեց ապագա փաստաբաններին՝ հիշեցնելով նրանց մասնագիտական գործունեությանը սրտացավորեն

մոտենալու մասին:

Շնորհավորական ուղերձներով հանդես եկան նաև Փաստաբանների պալատի խորհրդի անդամները: Նրանք վստահություն հայտնեցին, որ ապագա փաստաբաններն ունենալու են իրենց ավանդը փաստաբանության զարգացման գործում:

Ելույթներով հանդես եկան նաև Փաստաբանական դպրոցի շրջանավարտները: Նրանք շեշտեցին, որ յուրաքանչյուր փաստաբանի հաջողություն համայնքի հաջողությունն է:

Ելույթներին հաջորդել են փաստաբանների հանդիսավոր երդման և արտոնագրերի հանձնման արարողությունները:

Սիմոն Բաբայան



BACK $(window).load(function(){ if(typeof $(".fb_comments_count").html() != "undefined" && parseInt($(".fb_comments_count").html()) != 0){ updateCommentsCount(window.location.href); } })